ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/03

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Գասպարյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Անդրանիկ Խաչատրյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 02.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ կայացնել համապատասխան որոշում Բողոքաբերի իավունքները վերականգնելու ուղղությամբ, կամ արգելել իրականացնել №013/GArm/19_4.3-5.4_00/26.12.18 ծածկագրով գնումը, կամ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը, ոչ իրավաչափ ճանաչել հիշյալ հրավերը՝ մասնավորապես այն կետերը, որոնք վերաբերում են

ապրանքների տեսակներին և հրավերի գնի 50 տոկոսի չափով պայմանագիր ունենալու հանգամանքին:

Բողոքներ քննող անձի կողմից 17.04.2019 թվականին բողոքն ընդունվել է վարույթ և 22.04.2019 թվականին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 30.04.2019 թվականին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2019 թվականին:

2. «Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Բողոքաբերը բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի նախապատմությունը.

Բողոքաբերը մասնակցել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հայտարարված №013/GArm/19_4.3-5.4_00/26.12.18 ծածկագրով բաց առաջարկների հարցման ընթացակարգին:

15.01.2019թ. կազմված թիվ 3 արձանագրության համաձայն՝ մերժվել են «Գազ Սուզան» ՍՊԸ-ի և Բողոքաբերի կողմից ներկայացված հայտերը, իսկ «ԶԵԳԱ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Որպես հիմնավորում Պատվիրատուն հիշյալ արձանագրության մեջ նշել է հետևյալը. չեն ներկայացվել նախկինում կատարված նմանատիպ /համանման/ առնվազն 50 տոկոս մեկ պայմանագիր աշխատանքների ձեռքբերման և էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման համար: Նշվել է նաև, որ չեն ներկայացվել կարգեր, գծագրեր, որոնք պետք է ստորագրվեին և կնքվեին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Նշենք, որ բաց առաջարկների գնման հայտարարությունն ուներ հետևյալ բովանդակությունը.

«Բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում: Բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով իսկ կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B զահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում, վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում»:

Վերոգրյալից ելնելով, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից նշվել է կոնկրետ ապրանքի տեսակ, մոդել, և ըստ էության, դա խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

Վերոգրյալ իրավական նորմը համադրելով սույն գործում առկա փաստերի հետ՝ պարզ է դառնում, որ Պատվիրատուն սահմանել է չհիմնավորված 50 տոկոս արժեքի՝ նախկինում

կնքված պայմանագրի առկայությունը, որը իրականում խոչընդոտում է Բողոքաբերի գնմանը մասնակցելու իրավունքին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ կայացնել համապատասխան որոշում Բողոքաբերի իավունքները վերականգնելու ուղղությամբ, կամ արգելել իրականացնել №013/GArm/19_4.3-5.4_00/26.12.18 ծածկագրով գնումը, կամ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը, ոչ իրավաչափ ճանաչել հիշյալ հրավերը՝ մասնավորապես այն կետերը, որոնք վերաբերում են ապրանքների տեսակներին և հրավերի գնի 50 տոկոսի չափով պայմանագիր ունենալու հանգամանքին:»:

Միաժամանակ, սույն բողոքով ներկայացված միջնորդությամբ Բողոքաբերը հայտնել է, որ գնման ընթացակարգի շրջանակներում անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օրը: Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն www.gnumner.am կայքում չի հրապարակվել, որից ելնելով, եթե նույնիսկ բողոքներ քննող անձը կգտնի, որ բաց է թողնվել որևէ ժամկետ, ապա Բողոքաբերը խնդրել է այն վերականգնել:

3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ի կողմից 03.04.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է գրավոր դիրքորոշում, հետևյալի մասին.

««Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն գտնում է, որ բողոքը ամբողջությամբ անհիմն է և ենթակա է ամբողջովին մերժման՝ հետևյալ իրավական հիմքերով և հակափաստարկներով:

1. Գործի նախապատմության վերաբերյալ.

1.1 Բողոքում Բողոքաբերը նշել է, որ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ չեն ներկայացրել նախկինում կատարված նմանատիպ, համանման առնվազն 50%-ոց մեկ պայմանագիր՝ աշխատանքների և էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման համար:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ հանձնաժողովը արձանագրել է ոչ միայն այդ թերությունը, այլ նաև այն թերությունը, որ ընկերությունը չի ներկայացրել աշխատանքների ձեռքբերման համար բաց առաջարկների հարցման փաստաթղթերով պահանջված Աղյուսակ

58-ին (Elcor-M և Elcor-MU էլեկտրոնային ճշտիչների տրամաչափարկման աշխատանքներ, համապատասխան միավորի գներով) վերաբերվող գնային առաջարկը:

1.2 Բողոքում նշվել է նաև, որ չի ներկայացվել կարգեր, գծագրեր, որոնք պետք է ստորագրվեին և կնքվեին, ինչը բողոքաբերը համարել է անհիմն:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Բողոքաբերի կողմից ներկայացված հայտում բացակայել է գազահաշվիչների ընդունման, նախնական ստուգաչափման աջակցության (ՆՓՁՔ), վերանորոգման, ստուգաչափման աջակցության և բացթողնման պայմանների վերաբերյալ կարգը և գազահաշվիչների գծագրերը, որոնք ներկայացված է եղել www.gnumner.am կայքում հրապարակված փաթեթում առանձին ֆայլով և բաց առաջարկների հարցման փաստաթղթերի հայտը պատրաստելու հրահանգի գնման առարկայի բնութագիրը մասում նշված է, որ «վերը նշված կարգը և գծագրերը մասնակցի կողմից պետք է ստորագրվի և կնքվի», որը Բողոքաբերի կողմից չի կատարվել:

1.3 Բացի վերը նշվածից, Բողոքաբերի կողմից ներկայացված էլեկտրոնային ճշտիչների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել բաց առաջարկների հարցման փաստաթղթերով պահանջված տեխնիկական բնութագրերին (կցվում է տեղեկանքը):

Այսպիսով, 1.1-1.3 ենթակետերում նշվածը հաստատում է, որ Բողոքաբերը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից անցկացվող բաց առաջարկների հարցմանը ներկայացրել է ոչ լրիվ, թերի հայտ:

2. Բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ.

Այս բաժնում Բողոքաբերը պնդում է, որ պատվիրատուի կողմից բաց առաջարկների հարցման փաստաթղթերում նշվել է «կոնկրետ ապրանքի տեսակ, մոդել և ըստ ըության դա խախտում է գնումների մասին ՀՀ օրենքի պահանջները»:

Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը:

2.1 Այսպես, Elcor-M և Elcor-MU էլեկտրոնային ճշտիչների մոդելների վերաբերյալ պայմանագրում առկա հղումը վերաբերվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի պահեստում և բաժանորդների մոտ արդեն իսկ առկա գազահաշվիչների և էլեկտրոնային ճշտիչների վերանորոգման, ստուգաչափման (ՀՀ օրենսդրության պահանջ) կամ հաշվիների վրա կահավորման աշխատանքներին: Հետևաբար, մրցույթի մասնակիցը պետք է տեղեկություն ունենար, թե վերանորոգման, ստուգաչափման կամ կահավորման աշխատանքները ինչ տիպի ճշտիչների են վերաբերվում և մոդելի նշումը վերաբերվել է միայն դրանց առնչությամբ նախատեսված աշխատանքներին:

2.2 Ինչ վերաբերվում է նոր ձեռքբերվող էլեկտրոնային ճշտիչներին, ապա բաց առաջարկների հարցման փաստաթղթերում որևէ մոդելի կամ ապրանքի տեսակի վրա հղում գոյություն չունի, այլ պարզապես տառացի նշվել է «էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում» (հիմք՝ բաց առաջարկների հարցման փաստաթղթերի փոփոխված տարբերակ, որը հրապարակվել է 09.01.2019թ.-ին):

3. Բողոքաբերի միջնորդության վերաբերյալ.

Բողոքաբերը նշել է, որ սույն ընթացակարգով անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր, պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարություն www.gnumner.am կայքում չի հրապարակվել:

Բողոքաբերի կողմից ներկայացված այս տեղեկատվությունը ևս չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ (տեղեկատու)՝ www.gnumner.am կայքում 17.01.2019թ. ժամը 19:04:04-ից մինչև 23.01.2019թ. ժամը 00:00:00 հրապարակվել է վերը նշված բաց առաջարկների հարցման արդյունքների հիման վրա պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ հայտարարությունը:

Հաշվի առնելով ՀՀ գնումների մասին օրենքի 46-րդ հոդվածի 3 կետի 1 ենթակետը՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին» և ելնելով այն հանգամանքից, որ 31.01.2019թ. արդեն իսկ կնքվել է համապատասխան պայմանագիր, գնահատող հանձնաժողովը լուծարված է, գտնում ենք, որ «Գազ Սուզան Արմենիա» ՍՊԸ-ի 03.04.2019թ. բողոքը ամբողջությամբ անհիմն է, ոչ պատճառաբանված, առանց հիմնավոր փաստարկների և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ի կողմից 09.04.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածի համաձայն՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Օրենքի 46 հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

- 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների կատարման կարգերը, գնման գործընթացների կազմակերպման մասին հայտարարությունները, հրավերները, գնումների բազային միավորը գերազանցող՝ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները հրապարակվում են նաև տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 29-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կարիքների համար «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար Բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի),Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով(անջատիչ կափույրներով) կահավորված բնական գազի մեմբրանային գազահաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափման ապահովում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16 ,G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորման աշխատանքների և էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է №013/GArm/19_4.3-5.4_00/26.12.18 ծածկագրով բաց առաջարկների հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Գնման առարկան խմբավորված է եղել «1» չափաբաժում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.01.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ի հայտը:

Այնուհետև, 17.01.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ Հանձնաժողովը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գնումների մասին կարգի համաձայն, որոշեց բաց առաջարկների հարցման ընտրված մասնակից ճանաչել «Զեգա» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված բաց առաջարկների հարցման հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Բողոքներ քննող անձի կողմից www.gnumner.am կայքի հրապարակումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ս.թ. հունվարի 17-ին հիշյալ կայքում հրապարակվել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, որով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվել նույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Իսկ արդեն 31.01.2019թ. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «Զեգա» ՍՊԸ-ի միջև կնքվել է 430 850 000 ՀՀ դրամ արժողությամբ պայմանագիր:

Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

1. Ընթացակարգի Հանձնաժողովը 15.01.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ի հայտը:

2" Հանձնաժողովը որոշել է բաց առաջարկների հարցման ընտրված մասնակից ճանաչել «Զեգա» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված բաց առաջարկների հարցման հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3" «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ս.թ. հունվարի 17-ին հիշյալ www.gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, որով անգործության ժամկետ է սահմանվել նույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 5–րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4" 31.01.2019թ. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «Զեգա» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, որի վերաբերյալ հայտարարությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է 14.03.2019թ.:

5" «Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելուց հետո՝ 03.04.2019թ., Բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որով «Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ն վիճարկել է Հանձնաժողովի կողմից վերջինիս հայտի գնահատման արդյունքները, ինչպես նաև Հրավերով սահմանված մի շարք դրույթներ, և պահանջել է՝ կայացնել համապատասխան որոշում Բողոքաբերի իավունքները վերականգնելու ուղղությամբ, կամ արգելել իրականացնել №013/GArm/19_4.3-5.4_00/26.12.18 ծածկագրով գնումը, կամ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը, ոչ իրավաչափ ճանաչել հիշյալ հրավերը՝ մասնավորապես այն կետերը, որոնք վերաբերում են ապրանքների տեսակներին և հրավերի գնի 50 տոկոսի չափով պայմանագիր ունենալու հանգամանքին:

Այսպիսով, համադրելով վերոհիշյալ փաստական հանգամանքները և իրավական նորմերը, և հաշվի առնելով, որ Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքը Բողոքաբերի կողմից ներկայացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետների խախտմամբ, դրանով իսկ ներկայացված բողոքը դարձնելով առարկայազուրկ և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

«Գազ Սուզան Արմենիա» Հ/Ձ ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 03.04.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ